Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

ԱՆՀԱՏԱԿԱՆ ԴԻՄՈՒՄԻ ԸՆԴՈՒՆԵԼԻՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

քաղ. Երեւան 4 մայիսի 2009թ.

Հայաստանի Հանրապետության Սահմանադրական դատարանի 2-րդ դատական կազմը նախագահությամբ՝ Հ.Նազարյանի, անդամակցությամբ՝ Հ.Դանիելյանի, Ռ.Պապայանի, քննության առնելով քաղ. Խաչատուր Սուքիասյանի կողմից ներկայացված դիմումի ընդունելիության հարցը

Պ Ա Ր Զ Ե Ց

Քաղ. Խաչատուր Սուքիասյանը դիմել է ՀՀ սահմանադրական դատարան, վիճարկելով՝ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 285 հոդվածի 2-րդ մասի երկրորդ պարբերությունում ամրագրված դրույթների սահմանադրականությունը:

Դիմումատուն Երեւանի Կենտրոն եւ Նորք-Մարաշ համայնքների առաջին ատյանի դատարանում, ՀՀ վերաքննիչ քրեական դատարանում եւ ՀՀ վճռաբեկ դատարանում փորձել է պաշտպանել իր իրավունքները՝ սպառելով դատական պաշտպանության բոլոր միջոցները, եւ գտնում է, որ իր նկատմամբ վերջնական դատական ակտով կիրառված ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի վերոհիշյալ նորմը հակասում է ՀՀ Սահմանադրության 3 հոդվածին, 16 հոդվածի 3-րդ մասին եւ 25 հոդվածին:

Քաղ. Խաչատուր Սուքիասյանի դիմումը համապատասխանում է ՀՀ Սահմանադրության 101 հոդվածի 6-րդ կետի, «Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ օրենքի 27, 28 հոդվածների եւ 69 հոդվածի, ինչպես նաեւ ՀՀ սահմանադրական դատարանի կանոնակարգի պահանջներին եւ ենթակա է քննության: Պահպանվել է նաեւ սահմանադրական դատարան դիմելու՝ օրենքով նախատեսված ժամկետը, առկա է պետական տուրքի վճարման անդորրագիրը:

Ղեկավարվելով «Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ օրենքի 69 հոդվածով, ՀՀ ՍԴ 2-րդ դատական կազմը

Ո Ր Ո Շ Ե Ց

Քաղ. Խաչատուր Սուքիասյանի դիմումն ընդունել քննության, կազմել գործ, որով պատասխանող կողմ ճանաչել ՀՀ Ազգային ժողովին:

Նախագահող՝ Հ.Նազարյան

Անդամներ՝ Հ.Դանիելյան

Ռ.Պապայան